



Disability
Rights
California

California's Protection & Advocacy
System



Orange County Local
Partnership Agreement

15 խորհուրդ ծնող և ընտանիքի անդամ հանդիսացող պաշտպանների համար

Սեպտեմբեր, 2019թ., հրատ. #7148.10 - Armenian

Ձեր նպատակն է լավագույնս պատրաստել ձեր երեխային կամ ընտանիքի անդամին չափահաս դառնալու համար և ապահովել, որ վերջիններս ունենան անհրաժեշտ ծառայություններ և աջակցություն՝ իրենց նպատակներին հասնելու համար: Շատ ընտանիքների համար դա նշանակում է, որ դուք պետք է հաղորդակցվեք սահմանափակ կարողություն ունեցող մարդկանց ծառայություններ առաջարկող գործակալությունների և համակարգերի հետ: Դա նաև կարող է նշանակել, որ պետք է մասնակցեք հանդիպումների և պաշտպանեք ձեր մտերիմների շահերը: Այս տեղեկատվական ամփոփագրում ներառված են խորհուրդներ, որոնք կօգնեն ձեզ նախապատրաստվել հանդիպումների, մշակել ձեր երեխայի կամ ընտանիքի անդամի համար լավագույն պլան և լուծել խնդիրներ, որոնք կարող են ընթացքում ծագել:

1. Սկսեք անհատից

Պլանավորման ընթացքում ամենակարևոր անձը ձեր երեխան կամ ընտանիքի անդամն է: Սկսեք գործընթացը՝ մտածելով անձի նպատակների, և ոչ թե ծառայությունների ցուցակի մասին: Սա կօգնի ձեզ ավելի լավ մշակել անհատականացված և արդյունավետ պլան: Սկսեք ընդհանուր պատկերից և աշխատեք հետընթաց շարժվեք: Ինչ նպատակներ ունի անձը: Ի՞նչ փուլում են դրանք հիմա գտնվում: Ի՞նչ է հարկավոր այդ նպատակներին հասնելու համար:

Խոսքը ձեր երեխայի կամ ընտանիքի անդամի հետ այս թեմաների մասին: Խրախուսեք նրանց մասնակցել պլանավորման գործընթացին և թույլ տվեք նրանց որոշումներ կայացնել և ինքնուրույն մշակել իրենց պլանը և ծառայությունները: Նման դեպքում դուք կնպաստեք անձի ընտրությանը: Դուք նաև նրանց թույլ կտաք ավելի լավ պատկերացնել, թե ինչ է անհրաժեշտ իրենց նպատակներին հասնելու համար:

Պատասխանելով այս հարցերին՝ դուք ավելի ճիշտ կարող եք որոշել, թե ինչ ժամանակահատված, որ ծառայությունները, գործակալությունները և կազմակերպությունները պետք է ներառվեն պլանավորման գործընթացում:

2. Փաստաթղթեր պահեք

Ճիշտ գործելակերպ է ձեր երեխային կամ ընտանիք անդամին վերաբերող փաստաթղթեր, գնահատումներ, նամակներ և ծանուցումներ պահելը: Կարող եք դրանք պահել թղթապանակում կամ նոութբուքում: Դուք նույնիսկ կարող եք փաստաթղթերն էլեկտրոնային եղանակով պահել, որպեսզի չկորցնեք կարևոր փաստաթղթերը:

Գործակալություններից շատերն իրավաբանորեն պարտավոր են ձեզ տրամադրել ձեր երեխայի փաստաթղթերի պատճենները: Եթե ձեզ անհրաժեշտ են այն փաստաթղթեր, որոնք չունեք, ցանկացած պահի կարող եք պահանջել ձեր/ձեր երեխայի փաստաթղթերի պատճենները:

Եթե դուք խոսում եք հեռախոսով ինչ-որ մեկի հետ, ապա ձեռք բերեք այդ անձի անունը և պաշտոնը, որի հետ դուք խոսել եք, ինչպես նաև գործակալության անվանումը, որտեղ նա աշխատում է: Դուք կարող եք փոստով նամակ կամ էլեկտրոնային նամակ ուղարկել ձեր գրույցի և ձեզ հայտնած տեղեկությունների մասին: Անհրաժեշտության դեպքում խնդրեք նրանց, որ տեղեկությունները ձեզ ուղարկեն նամակով կամ էլեկտրոնային փոստով:

Որոշելու համար, թե արդյոք օգտակար կլինի տրամադրել փաստաթղթերը գործակալությանը, մտածեք հետևյալի մասին. Այս փաստաթուղթը ստույգ կերպով է ներկայացնում իմ երեխային կամ ընտանիքի անդամին: Այն կապ ունի՞ այն ծառայության (ների) հետ, որ ես պահանջում եմ: Եթե փաստաթղթեր ունեք, որոնք կօգնեն ձեզ ձեր շահերի պաշտպանության հարցում, ապա դրանք ձեզ հետ վերցրեք հանդիպմանը կամ կցեք դրանք հանդիպման հրավերին: Նաև կարևոր է գրառել, թե ում եք տրամադրել տեղեկատվություն, երբ և ինչ եք տրամադրել նրանց:

3. Խնդրեք տրամադրել այն, ինչ ձեզ հարկավոր է

Չնայած նրան, որ շատ գործակալություններ պլանավորում են ամենամյա հանդիպումներ, կարող եք հանդիպում կամ ծառայություն խնդրել **ցանկացած պահի**: Առաջարկում ենք, որ հայտ ներկայացնեք գրավոր և բացատրեք, թե ինչի մասին եք ցանկանում խոսել հանդիպման ժամանակ: Կարող է օգտակար լինել նշել հայտի մեջ, թե երբ է ձեզ հարմար հանդիպել: Հայտի մեջ պետք է նշվեն այն մարդիկ, որոնց հետ կցանկանայիք հանդիպել հանդիպման ընթացքում: Կարող եք նաև նշել ողջամիտ ժամկետ, որի ընթացքում կցանկանայիք, որ գործակալությունը պատասխանի ձեր հայտին: Պետք է նշվի ողջամիտ ժամկետ, որը գործակալությանը բավարար ժամանակ կտա՝ ձեր հայտն ուսումնասիրելու համար և համապատասխան կլինի ձեր երեխայի կամ ընտանիքի անդամի կարիքներին:

4. Հիմնական լեզու

Դուք իրավունք ունեք տեղեկատվություն ստանալ ձեր հիմնական լեզվով: Դուք իրավունք ունեք ձեր հիմնական լեզվի թարգմանիչ պահանջել, այդ թվում՝ American Sign Language (ASL): Եթե դուք հաշմանդամություն ունեք, ապա իրավունք ունեք տեղեկություններ ստանալ այլընտրանքային ձևաչափերով, ինչպես օրինակ՝ մեծ տառերով գրված տեքստ, Բրեյլի, և այլն: Կարող եք խնդրել գործակալություններին ձեզ տրամադրել թարգմանիչներ հանդիպումների համար և/կամ գրավոր փաստաթղթեր՝ ձեր հիմնական լեզվով կամ այլընտրանքային ձևաչափով:

5. Իմացեք ձեր իրավունքները

Կան բազմաթիվ տարբեր գործակալություններ, որոնք օգնում են հաշմանդամություն ունեցող անձանց: Որոշ անձանց անհրաժեշտ են բազմաթիվ տարբեր գործակալությունների ծառայություններ, իսկ այլ մարդկանց կարող են պետք լինել ծառայություններ միայն մեկ կամ երկու գործակալությունից:

Յուրաքանչյուր գործակալություն կարող է ունենալ տարբեր օրենքներ, կանոնակարգեր և ընթացակարգեր, որոնք սահմանում են, թե ում են նրանք

սպասարկում, ինչ ծառայություններ են մատուցում և որն է դրանց գործընթացը՝ հաշմանդամություն ունեցող անձանց ծառայություններ մատուցելու համար: Disability Rights California պաշտպանության մարմինն ապահովում է պաշտպանությունը և տրամադրում տեղեկատվություն այն գործակալությունների մասին, որոնք ծառայություններ են մատուցում հաշմանդամություն ունեցող անձանց Կալիֆորնիայում (California): Մեր հրապարակումները դիտելու կամ աջակցություն ստանալու համար այցելեք www.disabilityrightsca.org կամ զանգահարեք (800) 776-5746:

Շատ գործակալություններ իրենց կայքում հղումներ են կատարում համապատասխան օրենքներին: Հատուկ կրթության մասին տեղեկատվություն ստանալու համար տե՛ս California Department of Education կայքը. www.cde.ca.gov: Մտավոր կամ զարգացման շեղումներով անձանց համար ծառայությունների/Տարածաշրջանային կենտրոնի ծառայությունների մասին տեղեկատվության համար տե՛ս California Department of Developmental Services կայքը. www.dds.ca.gov: Նախնական զբաղվածության անցումային ծառայությունների և մասնագիտական վերականգնման ծրագրերի մասին տեղեկատվության համար տե՛ս California Department of Rehabilitation կայքը. www.dor.ca.gov:

6. Նախապատրաստվեք

Հանդիպումից առաջ ժամանակ տրամադրեք փաստաթղթերը, գնահատականներն ու գրառումներն ուսումնասիրելու համար: Եթե գործակալությունը, որի հետ հանդիպում եք, պետք է նոր գնահատում կամ գեկույց քննարկի հանդիպման ընթացքում, ապա կարող եք նախապես պատճենը խնդրել: Խորհուրդներ հարցրեք այլ ծնողներից, ուսուցիչներից և մասնագետներին իրենց փորձառության և առաջարկների մասին: Ապահովեք, որ թիմի համապատասխան անդամները և որոշում կայացնող անձինք ներկա լինեն հանդիպմանը:

7. Պլանավորեք

Նախքան հանդիպումը խոսեք ձեր երեխայի և ընտանիքի անդամի հետ նրանց նպատակների, կարիքների և նախապատվությունների մասին: Համառոտ գրեք, թե ինչի մասին կցանկանայիք խոսել հանդիպման ժամանակ: Եթե ծառայություն եք պահանջում, նաև օգտակար կարող է լինել գրառումներ կատարելը այն մասին, թե ինչու եք կարծում, որ ծառայության կարիքն ունեք: Կարող եք ձեզ հետ բերել փաստաթղթեր, որոնք կօգնեն աջակցել ձեր հայտին: Օրինակ՝ բժշկական փաստաթղթեր, գնահատումներ, այլ գործակալությունների կազմած փաստաթղթեր, աշխատաշուկայի վերաբերյալ

տեղեկատվություն և առցանց հետազոտություններ: Կարող եք նաև գրառել ունեցած հարցերի ցանկը, որպեսզի չմոռանաք դրանք տալ հանդիպման ժամանակ:

8. Մասնակցություն

Հանդիպման կենտրոնական դեմքը պետք է լինի անհատը: Կարևոր է, որ նրանք կիսվեն իրենց նպատակների, կարողությունների, հետաքրքրությունների, հնարավորությունների և մարտահրավերների վերաբերյալ տեղեկատվությամբ: Խրախուսեք, որպեսզի հնարավորության սահմանում ձեր երեխան կամ ընտանիքի անդամը մասնակցի հանդիպմանը: Եթե ձեր երեխային կամ ընտանիքի անդամին կացարան է անհրաժեշտ հանդիպմանը մասնակցելու համար, ապա նախօրոք խնդրեք այդ մասին:

Հանդիպմանը պարտադիր հարցեր տվեք, տեղեկություններ փոխանակեք և գաղափարներ առաջարկեք: Եթե չեք հասկանում, թե ինչ է ասվում կամ ինչ է տրվում ձեզ գրավոր, հարցրեք: Դուք և ձեր երեխան կամ ընտանիքի անդամը իրավունք ունեք հարցեր տալ այնքան, որքան անհրաժեշտ է, որպեսզի հստակ հասկանաք, թե ինչ է կատարվում: Եթե ունեք տեղեկատվություն, զեկույցներ, գնահատումներ կամ գրառումներ, որոնք կօգնեն աջակցել ձեր հայտին, կարևոր է, որ այդ տեղեկատվությունը կիսեք համապատասխան անձանց կամ գործակալությունների հետ:

Եթե ծառայություն եք պահանջել կամ հարց տվել, լսեք մյուս կողմի պատասխանը և թե ինչ են նրանք ասում: Համոզվեք, որ նրանք կպատասխանեն ձեր հարցերին: Հարցրեք նրանց որոշման պատճառը: Կարող եք խնդրել, որպեսզի տան իրենց որոշման գրավոր բացատրությունը: Եթե նրանք հղում են կատարում օրենքին, կանոնակարգերին կամ ընթացակարգերին, ապա խնդրեք պատճենը:

9. Եղեք կրեատիվ

Ծառայությունների համար պայմանավորվածություններ ձեռք բերելը և ձեր երեխայի կամ ընտանիքի անդամի ապագան պլանավորելը նույն բանը ՉԷ բոլորի համար: Բաց եղեք նոր մտտեցում փորձելու համար: Եղե՛ք նորարար: Խրախուսեք ուրիշներին ուսումնասիրել տարբեր ռազմավարություններ, հատկապես, եթե ներկայիս ռազմավարությունները ձեզ հարմար չեն: Փոխարենը մտածելու, թե ինչպես է արվել մինչև այժմ, մտածեք, թե ինչ է հնարավոր անել:

10. Համագործակցք

Յուրաքանչյուր գործակալություն և աշխատակից առանձնահատուկ հմտություններ և գիտելիքներ ունի, որոնցով կարող են կիսվել: Պատրաստ եղեք լսել նրանց տեսակետներն ու գաղափարները: Հարցրեք ռեսուրսների, ծառայությունների և այլ մարդկանց հաջողությունների պատմությունների մասին: Եթե տարածայնություններ կան, հիշեցրեք թիմին ընդհանուր նպատակի մասին՝ աջակցել ձեր երեխայի կամ ընտանիքի անդամի հաջողությանը:

11. Եղեք ավելի համարձակ, սակայն ոչ ագրեսիվ

Բոլորը, և հատկապես դուք և ձեր երեխան/ընտանիքի անդամը ձեր լուրման ունեք պլանավորման գործընթացում: Պարզ ներկայացրեք, թե ինչ եք ցանկանում: Խնդրեք պարզաբանել այն, թե ինչ կարող են և ինչ չեն կարող անել գործակալությունները:

Երբեմն ողջամիտ գաղափարներ ունեցող մարդիկ չեն համաձայնվում իրար հետ: Որոշելիս, թե ինչպես եք ցանկանում լուծել տարածայնությունները, հիշեք, որ, ամենայն հավանականությամբ, դուք և ձեր երեխան կամ ընտանիք անդամը ծառայություններ մատուցող գործակալությունների հետ երկարատև կապ եք ունենալու: Կարևոր է նշել ձեր անհամաձայնությունների մասին: Եթե կարծում եք, որ անհամաձայնության մասին խոսելն այլևս արդյունավետ չէ, կամ գործակալությունները չեն փոխում իրենց կարծիքը, ապա կարող եք վիճարկել որոշումը, այլ ոչ թե շարունակել քննարկումը:

Եթե որևէ խնդրանք մերժվում է կամ հանդիպմանը ներկայացված տեղեկատվությունը ձեզ ճիշտ չի թվում, ապա խնդրեք այն օրենքի կամ կանոնակարգի պատճենը, որը գործակալությունն օգտագործում է իր հիմնավորման կամ մերժման համար: Ընդհանուր առմամբ՝ սահմանափակ կարողություն ունեցող անձինք և նրանց ծնողներն իրավունք ունեն ստանալու գրավոր ծանուցում կամ նամակ, որում պարզաբանվում է հայտը մերժելու պատճառը: Դուք իրավունք ունեք իմանալու, թե ինչու են ձեզ մերժել որևէ ծառայություն կամ թե ինչու են ծառայության ծավալները նվազեցվել կամ դադարեցվել:

12. Բողոքարկման ձեր իրավունքը

Դուք իրավունք ունեք վիճարկել որոշումը, եթե համաձայն չեք դրա հետ: Դուք իրավունք ունեք հարցնել, թե որն է այն որոշման վիճարկման գործընթացը, որի հետ համաձայն չեք: Դուք իրավունք ունեք գրավոր ձևով ստանալու այդ տեղեկատվությունը: Բողոքարկման գործընթացների մեծ մասը ժամկետներ ունի՝ կապված նրա հետ, թե որքան ժամանակ ունեք որոշումը վիճարկելու համար:

13. Միջանկյալ լուծումներ

Դուք կարող եք խնդիր կամ հայտ ունենալ, որը չի կարող լուծվել հանդիպման ժամանակ: Օրինակ՝ անհամաձայնություններ, թե որ գործակալությունը պետք է ֆինանսավորի ծառայությունը կամ որ գործակալությունը պետք է մատուցի ծառայությունը ձեր երեխային կամ ընտանիք անդամին: Եթե կան հարցեր, որոնք հնարավոր չէ լուծել հանդիպման ընթացքում, ապա քննարկեք կարճաժամկետ գործողությունների պլան ունենալու հարցը՝ ապահովելու, որ անձը ստանա ծառայությունը/կարողանա մասնակցել ծառայությանը այն ժամանակը, երբ վեճը լուծման փուլում է: Օրինակ՝ գործակալությունները կարող են համաձայնության գալ համատեղ ֆինանսավորել ծառայությունը, մինչ վեճը լուծվում է: Կամ դուք կարող եք պայմանավորվածություն ձեռք բերել ծառայության մեկնարկի ամսաթվի վերաբերյալ, նույնիսկ եթե համոզված չեք ծառայություն մատուցողի հարցում:

14. Հաստատեք համաձայնագրերը և գործողությունների ցանկը

Նախքան հանդիպումն ավարտելը կրկին կարդացեք ձեր բոլոր գրառումները քննարկած համաձայնագրերի և գործողությունների ցանկի վերաբերյալ, որպեսզի համոզվեք, որ բոլորը նույն կերպ են հասկանում հանդիպումը: Կարող եք հետագայում էլելկտրոնային նամակ կամ փոստով նամակ ուղարկել թիմին այն մասին, թե ինչ եք քննարկել հանդիպման ընթացքում: Նման դեպքում՝ դուք կկազմեք ձեր հանդիպման գրավոր փաստաթուղթ, որը կարող եք պահել ձեր ֆայլերում:

15. Փաստաթղթերի ստորագրում

Անպայման կարդացեք փաստաթղթերը, նախքան դրանք ստորագրելը: Դուք և ձեր երեխան կամ ընտանիք անդամն իրավունք ունեք վերանայել փաստաթղթերն ամբողջությամբ: Հանդիպման ընթացքում պետք չէ

ստորագրել պլանը կամ այլ փաստաթղթեր: Կարող եք խնդրել, որպեսզի պատճենը տան ձեզ տանը վերանայելու համար: Կարող եք մտածել փաստաթուղթն այլ ծնողների կամ մասնագետների հետ քննարկելու մասին՝ նախքան այն ստորագրելը: Եթե համաձայն չեք որևէ փաստաթղթի հետ կամ ցանկանում եք փոփոխություններ կատարել դրա մեջ, կարող եք գործակալությանը խնդրել փոփոխություններ կատարել՝ նախքան այն ստորագրելը: Ստորագրեք միայն այն, ինչի հետ համաձայն եք, և նշեք այն մասին, թե ինչի հետ համաձայն չեք, նույն փաստաթղթի վրա կամ փաստաթղթին կից նամակում:

Ցանկանում եմք, որ կապվեք մեզ հետ: Խնդրում ենք լրացնել մեր հրապարակումների վերաբերյալ հետևյալ հարցաթերթը և տեղեկացնել մեզ, թե որքանով ենք մենք հաջողել: [\[Անցնել հարցումը\]](#)

Իրավաբանական օգնության համար զանգահարեք 800-776-5746 կամ լրացրեք [աջակցության հայտի ձևաթուղթը](#): Բոլոր այլ նպատակներով զանգահարեք 916-504-5800 (Northern CA), 213-213-8000 (Southern CA):

Disability Rights California պաշտպանության մարմինը ֆինանսավորվում է մի շարք աղբյուրների կողմից, ֆինանսավորողների ամբողջական ցուցակի հետ ծանոթանալու համար այցելեք <http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html>.